ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲ ՈՒՐԱՐՏՈՒ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020 թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

Գրանցված է ՀՀ Պետական ռեգիստրի կողմից 16.01.2003 թ.
Գրանցման վկայական՝ 03 Ա 057998
Հասցե՝ ՀՀ, Երևան, Ջիվանի 2

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ֆուտբոլային Ակումբ Ուրարտու Մարզական Հասարակական Կազմակերպության Ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Ֆուտբոլային Ակումբ Ուրարտու Մարզական Հասարակական Կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2020թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Կազմակերպության ֆինանսական վիճակը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Կազմակերպությունը լուծարելու կամ Կազմակերպության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի՝ մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

12 ապրիլի, 2021 թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
JOINT VENTURE LIMITED LIABILITY COMPANY "LONDON BUSINESS GROUP" RA YEREVAN
01223655
N16

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Դրամական միջոցներ և համարժեքներ	3	538,775	43,596
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով	4	105,000	255,000
Այլ դեբիտորական պարտքեր	5	-	14,391
Ընթացիկ հարկային ակտիվներ	5	105	190
Պաշարներ	6	2,926	29,670
Այլ ընթացիկ ակտիվներ	5	2,082	7,619
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*648,888*	*350,466*
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	692,088	713,381
Ոչ նյութական ակտիվներ՝ ֆուտբոլիստներ	8	18,348	-
Այլ ոչ նյութական ակտիվներ	8	108,499	130,238
Դեբիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Դեբիտորական պարտքեր խմբի կամ կապակցված կողմերի գծով		-	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	9	6,271	-
Հետեձգված հարկային ակտիվներ		-	-
Ներդրումներ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*825,206*	*843,619*
Ընդամենը ակտիվներ		**1,474,094**	**1,194,085**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Շարունակություն, մաս 2)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Բանկային օվերդրաֆտներ և այլ վարկեր		-	-
Խմբից կամ կապակցված կողմերից ստացված փոխառություններ	10	109,692	103,498
Կրեդիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատկացումների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	11	8,626	9,153
Այլ կրեդիտորական պարտքեր	11	24,677	21,550
Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ		-	-
Եկամուտներին վերաբերող շնորհներ	12	397,575	88,575
Ընթացիկ պահուստներ	13	9,418	9,418
Ընդամենը ընթացիկ արտավորություններ		*549,988*	*232,194*
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Բանկային և այլ վարկեր		-	-
Խմբից կամ կապակցված կողմերից ստացված փոխառություններ		-	-
Կրեդիտորական պարտքեր ֆուտբոլիստների տրանսֆերների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և այլ հատուցումների գծով		-	-
Կրեդիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով		-	-
Այլ կրեդիտորական պարտքեր		-	-
Ստացված կանխավճարներ և հետաձգված եկամուտ		-	-
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	12	825,206	843,618
Երկարաժամկետ պահուստներ		-	-
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	14	98,900	118,273
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*924,106*	*961,891*
Ընդամենը պարտավորություններ		**1,474,094**	**1,194,085**
Ընդամենը զուտ ակտիվներ		-	-

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Շարունակություն, մաս 3)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		-	-
Չբաշխված շահույթ		-	-
Պահուստներ		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		-	-

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հ. Աղաբեկյան
Գլխավոր տնօրեն

Օ. Ենոքյան
Ֆինանսական հարցերով պատասխանատու

12 ապրիլի, 2021 թ.

L.S.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ			
Տոմսերի իրացում		-	-
Հովանավորչություն և գովազդ		-	-
Հեռարձակման իրավունքներ		-	3,181
Առևտրական		5,513	5,510
ՈՒԵՖԱ-ի համերաշխության և մրցանակային գումարներ	15	134,473	135,514
Այլ գործառնական եկամուտ (նվիրատվությունների եկամուտ ճանաչված մաս և մարզումային փոխհատուցումներ)	15	515,128	322,907
Ընդամենը հասույթ		**655,114**	**467,112**
Ծախսեր			
Մատուցված ծառայության ինքնարժեք		(1,437)	(17,425)
Աշխատավարձի գծով ծախսեր՝ ֆուտբոլիստներին	16	(57,274)	(36,072)
Աշխատավարձի գծով ծախսեր՝ այլ աշխատակիցներին	16	(180,054)	(104,211)
Հիմնական միջոցների մաշվածության և սպասարկման ծախսեր	7	(126,910)	(80,445)
Ոչ նյութական ակտիվների՝ համակարգչային ծրագրերի ամորտիզացիա (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)	8	(40)	(40)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		-	-
Այլ գործառնական ծախսեր՝			
ֆուտբոլային ծախսեր	17	(174,952)	(164,086)
վարչական ծախսեր	17	(54,656)	(62,242)
Ընդամենը գործառնական ծախսեր (բացառությամբ ֆուտբոլիստների գրանցման հետ կապված ծախսերի)		**(595,323)**	**(464,521)**
Գործառնական շահույթ (վնաս)		**59,791**	**2,591**

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
(Շարունակություն. մաս 2)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերում և օտարում			
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա (ֆուտբոլիստների գրանցում)		(3,720)	(246)
Ոչ նյութական ակտիվների արժեզրկում (ֆուտբոլիստների գրանցում)		-	(954)
Գրանցումների օտարումից շահույթ (վնաս)		-	-
Գրանցման ձեռքբերմանն ուղղված ծախսեր (ներառյալ չկապիտալացված վճարներ գործակալներին կամ միջնորդներին և ֆուտբոլիստների վարձակալության վճարներ)		(1,540)	(360)
Ֆուտբոլիստների գրանցման օտարումներից եկամուտներ (ներառյալ վարձակալությունից եկամուտ)		-	14,553
Ընդամենը ֆուտբոլիստների գրանցման ձեռքբերում և օտարում		**(5,260)**	**12,993**
Ոչ ընթացիկ ակտիվների օտարման արդյունք			
Հիմնական միջոցների օտարումից օգուտ (վնաս)		-	-
Ոչ նյութական ակտիվների օտարումից օգուտ (վնաս)		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվների օտարումից օգուտ (վնաս)		-	-

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
(Շարունակություն, մաս 3)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական եկամուտ (ծախս) և փոխարժեքային տարբերություններ			
Ֆինանսական եկամուտներ	18	210	216
Ֆինանսական ծախսեր	18	(13,588)	(15,189)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	18	(31,529)	5,030
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախս) և փոխարժեքային տարբերություններ		**(44,907)**	**(9,943)**
Այլ ոչ գործառնական գործունեություն			
Այլ եկամուտներ (ոչ գործառնական)		-	-
Այլ ծախսեր (ոչ գործառնական)		(8,853)	(1,618)
Այլ ոչ գործառնական գործունեության արդյունք		**(8,853)**	**(1,618)**
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		771	**4,023**
Շահութահարկ		(771)	**(4,023)**
Տարվա զուտ շահույթ (վնաս)		-	-

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հ. Աղաբեկյան
Գլխավոր տնօրեն

Օ. Ենոքյան
Ֆինանսական հարցերով պատասխանատու

12 ապրիլի, 2021 թ.

Կ.Տ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Մուտքեր տոմսերի իրացումից		-	-
Մուտքեր հովանավորչությունից ու գովազդից		-	-
Մուտքեր հեռարձակման իրավունքներից		-	2,629
Մուտքեր առևտրային գործունեությունից		6,039	5,510
Այլ մուտքեր՝			
նվիրատվություններ		932,702	507,739
մարզումային փոխհատուցումներ		6,480	2,550
այլ		12,907	373
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		*958,128*	*518,801*
Ելքեր գործառնական գործունեությունից			
Վճարումներ ձեռքբերված ապրանքների ու ծառայությունների դիմաց		214,036	329,633
Վճարումներ աշխատակիցներին և հօգուտ նրանց		177,045	89,640
Վճարումներ գործակալներին ու միջնորդներին		-	-
Վճարումներ այլ գործառնական ծախսերի դիմաց		91,612	71,896
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*482,693*	*491,169*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**475,435**	**27,632**
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Դրամական միջոցներ ֆուտբոլիստների գրանցման օտարումից		-	14,553
Մուտքեր հիմնական միջոցների օտարումից		-	-
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից		150,000	180,242
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		*150,000*	*194,795*
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Վճարումներ ֆուտբոլիստների գրանցումներ ձեռք բերելու նպատակով		-	-
Վճարումներ հիմնական միջոցների ձեռքբերման դիմաց		108,779	46,956
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից		-	255,242
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		*108,779*	*302,198*
Զուտ հոսք ներդրումային գործունեությունից		**41,221**	**(107,403)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
(Շարունակություն, մաս 2)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխկապակցված կողմերից ստացված փոխառություններ		630,796	452,281
Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր ու փոխառություններ		-	-
Մուտքեր կանոնադիր կապիտալի ներդրումից		-	-
Մուտքեր պարտատոմսերի թողարկումից		-	-
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		210	216
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		*631,006*	*452,497*
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխառությունների մարում փոխկապակցված կողմերին		658,923	366,777
Վարկերի ու փոխառությունների մարում ֆինանսական կազմակերպություններին		-	-
Կանոնադիր կապիտալի նվազեցում կամ շահաբաժինների վճարում		-	-
Պարտատոմսերի մարում		-	-
Տոկոսների վճարում		-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		*658,923*	*366,777*
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		(27,917)	85,720
Դրամական միջոցների փոփոխություն		488,739	5,949
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		6,440	(2,035)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբում	3	43,596	39,682
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	3	538,775	43,596

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հ. Աղաբեկյան
Գլխավոր տնօրեն

Օ. Ենոքյան
Ֆինանսական հարցերով
պատասխանատու

12 ապրիլի, 2021 թ.

Կ.Տ.